Արձանագրություն N 2
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կարիքների համար «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/42Շ» ծածկագրով հրատապ բաց մրցույթ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ մեկնարկ՝ 23.08.2024թ.
ժամը 11:00:
ավարտ՝ 11.09.2024թ. Ժամը 15:00

Մասնակցում էին՝

Վահե Աչոյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության, ճանապարհային քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ)
Արամ Խաչատրյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)
Նորիկ Մնոյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության փորձագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)
Հովհաննես Ավետիսյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի միջին նորոգման ծրագրերի կառավարման բաժնի ավագ ինժեներ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԳԱ)
Աիդա Բաբուջյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)
Լուսինե Զաքարյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության ճանապարհային քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ՝ ԳՊ/ԲԱ)
Կարեն Բաբախանյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գնումների համակարգման և կազմատնտեսական վարչության գնումների համակարգման բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար՝ ԳՊ/ՄՀՄ)

Օրակարգ
Հայտերի բացման և գնահատման նիստի մասին

1. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները և հասցեները

1.1 ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/42Շ» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել.

N	Մասնակցի անվանումը	Գտնվելու վայրը	Կապի միջոցը էլ.փոստ, հեռ.համար
1	**«Վասպուրականի ՃՇՇ» ՍՊԸ**	Լեմկին /Շ/ 14, Կենտրոն, Երևան, ՀՀ	vaspurakanjshsh@gmail.com +374 96 409 095
2	«Քարավան-11» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովա պողոտա 19/1	qaravanqaravan@gmail.com +374 96 28 87 98

		շենք, բնակարան 6	
3	«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ և «ԷՄ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ կոնսորցիում	ՀՀ, ՎՁՄ, ք. Վայք, Կամոյի փ. 1-ին նրբ. տ. 12	ecobuilding17@gmail.com 093-83-88-22 , 091-999-644
4	«Եվրոբուդ Պլյուս» ՍՊԸ	Արտաշատի խճուղի 15/1, Շենգավիթ, ք.Երևան	eurobudplus@gmail.com +374 77 91-76-58
5	«Ճան Շին» ՍՊԸ	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ. Լճաշեն 28/3	chanshin2018@mail.ru 077 413 622

2. *Տեղեկատվություն՝ հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին*.

2.1 Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

3. Տվյալներ յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 Մասնակիցների կողմից հայտերով ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան և գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ – 0 /Վահե Աչոյանը և Լուսինե Զաքարյանը բացակայում էին, գտվում են արձակուրդում/

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
	ՉԱՓԱԲԱԺԻՆ 1 **Հ-30 /Մ-4/ -Ճամբարակ -/Հ-7/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ19+ 233 + կմ32 + 000 հատվածի միջին նորոգման աշխատանքներ**	
	Նախահաշվային գին 740 436 307 ՀՀ դրամ	
«Վասպուրականի ՃՇՇ» ՍՊԸ	***431 500 000***	**517 800 000**
«Քարավան-11» ՍՊԸ	***431 500 000***	**517 800 000**
«ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊԸ և «ԷՄ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ կոնսորցիում	*487 450 000*	584 940 000
«Եվրոբուդ Պլյուս» ՍՊԸ	*505 958 000*	607 149 600
«Ճան Շին» ՍՊԸ	*554 000 000*	664 800 000

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Վասպուրականի ՃՇՇ» և «Քարավան-11» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացվել է միևնույն՝ նվազագույն գնային առաջարկը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջներով, գնահատող հանձնաժողովը ***որոշեց***.

- հանձնաժողովի նիստը կասեցնել և գնահատող հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել մեկ աշխատանքային օրվա ընթացքում հավասար գներ ներկայացրած մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման պայմանների, տևողության, օրվա, ժամի և վայրի մասին:

- Գնի նվազեցման միաժամանակյա բանակցություններն անցկացնել 04.09.2024թ.-ին, ժամը 11:00 -ին, ՀՀ, ք. Երևան, կառավարական տուն 3, 6-րդ հարկ, 639 աշխատասենյակ հասցեով, հետևյալ պայմաններով.

- Գնի նվազեցման միաժամանակյա բանակցություններին մասնակցելու իրավունք են ստանում բանակցությունների մեկնարկին՝ 04.09.2024թ.-ին, ժամը 11:00-ին, ՀՀ, ք. Երևան, կառավարական տուն 3, 6-րդ հարկ, 639 աշխատասենյակ /բանակցությունների անցկացման հասցե/ ներկայացրած, հավասար նվազագույն գին առաջարկած մասնակիցները:

- Բանակցությունների անցկացման տևողությունը սահմանվում է 15 րոպե, յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակցի (մասնակիցների) համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը: Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոշվում ու հայտարարվում են ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցները:

5. Գնի նվազեցման միաժամանակյա բանակցություններ

Գնի նվազեցման միաժամանակյա բանակցությունները տեղի ունեցան 04.09.2024թ.-ին, ժամը 11:00-ին, ՀՀ, ք. Երևան, կառավարական տուն 3, 6-րդ հարկ, 639 աշխատասենյակ հասցեում: «Քարավան-11» ՍՊԸ ներկայացուցիչը բանակցություններին չէր ներկայացել: «Վասպուրականի ՃՇՇ» ՍՊԸ ներկայացուցիչը առաջարկեց նոր՝ նվազեցված գին, որը ներկայացվում է ստորև.

Մասնակցի անվանումը	Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ ՀՀ դրամ	Առաջարկված գին /ներառյալ ԱԱՀ/ ՀՀ դրամ
«Վասպուրականի ՃՇՇ» ՍՊԸ	***431 450 000***	**517 740 000**

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4 , դեմ – 0 /Վահե Աչոյանը և Լուսինե Զաքարյանը բացակայում էին, գրվում են արձակուրդում/

6. Գնահատման արդյունքներ

Հիմք ընդունելով գնահատման արդյունքները գնահատող հանձնաժողովը ***որոշեց***.

- Որպես գնման ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարող և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2024/42Շ» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել՝ «Վասպուրականի ՃՇՇ» ՍՊԸ-ին:

- Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

- <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

- Պայմանագիր կնքելու նպատակով անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում

ներկայացնել պայմանագրի ապահովում գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով և որակավորման ապահովում՝ գնման գնի 30 (երեսուն) տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 6, դեմ – 0

5. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝

Վ. Աչոյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Խաչատրյան _____

Ն. Մնոյան _____

Հ. Ավետիսյան _____

Ա. Բաբուջյան _____

Լ. Զաքարյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Կ. Բաբախանյան _____